ձիաները բռնած, սպասում էին մեր երկու ղավազները: Մենք հեծանք, սկսեցինք դիմել դէպի Թօփրակ-կալէ եւ միւս հնութիւնները:

Դուրս գալով քաղաքից, երբ փոքր-ինչ հեռացանք, մեր շրջակայքում բացուեցան հիանալի տեսարաններ. մի կողմում երեւում էր կանաչազարդ Այգեստանը, երեւում էին եւ Վարագայ կանաչազարդ լեռները, որոնց կուրծքի վրայ, խորին ջերմեռանդութեամբ գրկուած, բազմել էր Վարագայ գեղեցիկ վանքը: Միւս կողմում, մանիշակագոյն հայելիի նման, փայլում էր Վանայ ծովակը: Այդ ծուռեւ հայելին դրուած էր հիանալի շրջանակի մէջ, որը բոլորում էր նրա գեղագրական եզերքը, մեղմ, ալիքաւոր բարձրութիւններով, դրանք էին՝ Արտոս, Արնոս, Սիփան, Նեբրովթ եւ Գրգուռ լեռները, որոնց գօտիները չօրէք կողմից սեղմել էին իրանց մէջ ջրի այդ մեծ աւազանը:

Կարծես այդ աշխարհում հեթանոսական եւ քրիստոնէական ժամանակների յիշատակարանները դեռ մինչեւ այսօր մրցութիւն էին անում միմեանց հետ: Մի կողմում, բեւեռագրերով զարդարուած փառաւոր շինուածքներ ցոյց էին տալիս ամենահին անցեալի վրայ, միւս կողմում, սփռուած էինք տեսնում բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ: Այդ վանքերը դեռ շէն էին եւ լի բազմաթիւ կրօնաւորներով: Իսկ նրանց կողքին, մենք գնում էինք տեսնելու մի հին, մոռացուած մեհեանի տխուր աւերակները...

Վերջապէս, հասանք Թօփրակ-կալէ: Այդ աւերակ բերդը ուրիշ անուններ եւս ունի. նա կոչւում է Ակռփու-քար եւ Զըմփ-զըմփ-մաղարայ: Բայց այդ երեք անուներից եւ ոչ մէկը նրա նախնական անունը չէ. դրանք ստացել են վերջին ժամանակներում: Ինչպէ՞ս էր կոչւում նա առաջ. ոչ ոք չգիտէ, պատմութիւնը լռում է այդ մասին: Այդ բերդը մի ամբողջ քաղաք է եղել, որ այժմ ծածկել է ահագին հողակոյտերի ներքոյ: Հէնց այդ է պատճառը, որ նրան թուրքերի բառերով կոչում են Թօփրակ-կալէ (Հղաբերդ): Գուցէ այդ անյայտացած քաղաքը այն կախարդուած «պղնձէ քաղաքըէ լինէր, որ մինչեւ այսօր վանեցոց աւանդութիւնների մէջ պահպանել է իր դժբախտ, առասպելական պատմութիւնը: Չար վհուկի դիւթելով, ամբողջ քաղաքը իր պարիսպներով, տներով եւ բնակիչներով անշարժ պղինձ է դառնում: Ասլանը ասում էր ինձ, այդ աւանդութիւնը ճիշտ է միայն այն կողմից, որ եթէ այդ հողակոյտերի մէջ փորուածքներ անելու լինեն, մետաղեայ բոլոր առարկաները կը գտնեն պղնձից շինուած, որովհետեւ այդ աւերակները պատկանում են պղնձէ դարաշրջանին: Եւ իրաւ, որպէս պատմեց մեզ մեր առաջնորդը, այնտեղ գտել էին զանազան պղնձէ զարդեր, պղնձէ զէնքեր, պղնձէ տնային կարասիք եւ մինչեւ անգամ պղնձէ մարդիկ: